

ԴԵՄԻՐՃՅԱՆԸ ԵՎ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ
ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Գրական գործունեության առթիվ իր «Հոբելյարի խոսքում» Դեմիրճյանն ասում է, որ «վաղ մանկությունից դեռ ճեմարանի չորրորդ դասարանի աշակերտ և հոգեկից զրվեցի մայրկության մեծ հանճարներին Շեքսպիրին, Գյոթեին, Բայրոնին, Բեթհովենին, Տոլստոյին, և կտրվեցի ազգային գրականությունից ու կուլտուրայից: Շատ էր մեծ այդ լուսատուների լույսը, ծածկում էր նա հայրենի հայ գրականության աստղերին»: ¹ «Ինքնակենսագրությունում» Դեմիրճյանը վերհիշում է որոնումների այդ շրջանը («որոնում էի ինքս ինձ»), երբ «պատանեկան ռոմանտիկական պեսիմիզմը», «բայրոնիզմը» մղում էին նրան Շեքսպիրի, Գյոթեի, Հայնեի, Պուշկինի, Լերմոնտովի, Գոգոլի աշխարհը և դուրս բերում նրան հայ գրականության սահմաններից <<դեպի համաշխարհային գրական կուլտուրայի ասպարեզը»: Գրական հայացքների կազմավորման այս ընթացքով Դեմիրճյանը հայտնվում է «Վերնատուն» գրական շրջանակում, որի սկզբունքն էր շարժում, դուրս գալու ազգային սահմանափակությունից, հայ գրականության կեղծ կլասիկական տրագիգիաներից (Ալիշան և ուրիշներ) հրաժարում Պատկանյանի ազգայնական պոեզիայից, Բաֆֆու նույն ուղղության պրոգայից դեպի համաշխարհային կլասիկա, համամարդկային գաղափարներ, ժողովրդական ազգային կուլտուրա» (14, 10): Այսպիսի գնահատականներով հանդերձ պայմանականորեն կարելի է սույն գլուխը վերնագրել «համաշխարհային գրականություն» հասկացությամբ, քանի որ հաճախ և անընդմեջ հիշատակվող համաշխարհային դասականների Շեքսպիրի, Գյոթեի, Հայնեի, Բայրոնի, Իբսենի և այլոց հիշատակումով հանդերձ Դեմիրճյանը հատուկ հոգվածներ չի նվիրել նրանց գրական վաստակի վերլուծությանը: Նրա հետաքրքրության ոլորտում մշտապես եղել է ողուս գրականությունը:

Եվրոպական գրականության դասականներից առաջինը Մուպասանն է արժանացել Դեմիրճյանի գնահատանքին, ավելի ճիշտ, նրա «Մաղմուզեկ Ֆիֆի» պատմվածքների ժողովածուն հայերեն թարգմանությամբ: Համառոտակի վերլուծելով պատմվածքները Դեմիրճյանը շեշտը դնում է

¹ Դ. Դեմիրճյան, Երկերի ժողովածու, Երևան, 1987, հ. 12, էջ 362 (Այսուհետ՝ կնշվի հստորը և էջը):

Ֆրանս-պրուսական պատերազմում պրուսական զինվորական վերնախավի սանձարձակ պահվածքի վրա, ինչպես նաև պարտված ֆրանսիացիների ազգային անընկճելի ոգու բարոյական վեհությանը: Մոպասանը սուր դիտողությամբ պատկերել է պրուսացիների ռազմաշունչ ոգին, զազանային բնագոյները, ավերիչ մղումներն ու ծաղրը այլ ժողովուրդների նկատմամբ:

Մոպասանի արվեստի վերաբերյալ Դեմիքճյանը նկատում է , որ նա «հաղթահարել է իր երբեմնի նատուրալիզմը և մտել է մարդկային ռեալիզմի խորքերը, տվել է կյանքը իր ներքին աշխարհով» (12, 290):

«Դեկամերոնը» հայերեն» հոդվածում Բոկաչիոյի հանրահայտ վեպը Դեմիքճյանը համարում է այն մեծ ստեղծագործություններից մեկը, որ տվել է տիտանների էպիսան» և որոնք «Եվրոպայի պատմության իլյուստրացիոն փաստաթղթերն են»: Նման երկերում արտացոլվում է «դարերի կենդանի շունչն ու մթնոլորտը» և «Բոկաչիոն իր «Դեկամերոնով» մեկն եղավ վերածնության խառն գործիչներից, որը լուսավորեց «տիտանների դարի» հետագա ուղին» (13, 242): Մերժելով վեպի անբարոյականության վերաբերյալ սահմանափակ պատկերացումը, Դեմիքճյանը այն վերագրում է դարի ոճին և վեպի ուղղությունը համարում է ռեալիստական՝ «հումանիզմի և քննադատող ռեալիզմի փաստաթուղթ»: « Ի նչ է, իրոք, այդ մերկ ու համարձակ նկարագրությունների իմաստը: Չէ որ քաղբենիական կենցաղում «Դեկամերոնը» համարվել է «անբարոյական» դեպքերի նկարագրություն և հետամտող մի գիրք: Բայց որ նման բացասական որակումը զալիս էր ամենից առաջ ծաղրի ենթարկված դասակարգից ազնվականությունից և հոգևորականությունից, սա ինքնին ցույց է տալիս, որ «Դեկամերոնի» ոճը հարմարված էր վերածնության ռեալիզմի երգիծաբանական գրական կուլտուրային»: Բնորոշելով վեպի ուղղությունը Դեմիքճյանը դիտում էր, որ ժանրերի նովելային կազմը «ժողովրդական հիմք ունի», որն առնչվում է բանահյուսական լատիվոր գրույցների և կատակաբան թափառող ծաղրածուների իմպրովիզացիաների հետ:

Ժամանակին խորհրդային միության ժողովուրդների գրականության ու գրողների հոբելյանը դիտվում էր իբրև համամիութենական մշակութային երևույթ և այդ մակարդակով նշվում էր միության բոլոր ժողովուրդների միջոցառումներում: Հոբելյանական այս նշումով Դեմիքճյանն անդրադարձավ վրաց գրող Ալեքսանդր Ղազբեգիի և ադրբեջանական գրականության անվանի դեմքերի՝ Նիզամու և Ա. գրական դիմանկարներին: Դեմիքճյանը Ղազբեգիի մասին իր խոսքում հատկապես ընդգծում է և նրա ինքնատիպ անհատականությունը, ռոմանտիկական ազատամտությունը նրա բնավորության ընդերքում: Պատկանելով ազնվականական դասի միջավայրին՝ նա , սակայն, վաղ մանկությունից սիրեց բնաշխարհի ու գեղջկական

կյանքի, հովվերգական ապրելակերպի պարզությունն ու մաքրությունը: Անկամ բարձրագույն կրթություն ստանալով վերադառնում է հայրենիք և ընտրում հովվի ազատ ապրելաձևը: Նույն այս ոռոմանտիկ ներշնչանքով են տոգորված Ղազբեգի գրական ստեղծումները:

Մինչդեռ «իրենց տանը իրեն կրթում էին թագավորագնի նման՝ գարթենցելով նրա մեջ նախանձ, քեն ու գոռոգություն, Նիսուն (ղայակը) նրան իր հեթաթներով ու զրույցներով սովորեցնում էր սիրել ճորտերին ու ծառաներին, արցունքներ էր հոսեցնում նրա աչքերից տանջվող ժողովրդի վիճակի մասին իր պատմություններով», - իր հուշերում գրել է Ղազբեգին:

Ղազբեգին վրացական ոռոմանտիզմի հիմնադիր գրողներից է: Նրա գրական ուղղությունը պատկանում է հովվերգական ռոմանտիզմին և, սակայն, ժամանակի գրականագիտության տեսական դժգոհությամբ ղեկավարված «Ռեմիդյանը բնորոշում է, թե «Ղազբեգին ռեալիստ է, լավ ճանաչում է իր ստեղծագործության իրականությունը, նկարագրում է ուղղակի նատուրալիզ» (13, 24):

«Մեծ հումանիստը» հողավածը նվիրված է Նիզամի Գյանջևի ծննդյան 800-ամյակին: Ռեմիդյանը բանաստեղծին ներկայացնում է աղբյուրաբանական գրականություն հասկացության տակ, սակայն ներքուստ նրա բնորոշումները ելնում են պարսկական իրականության նախադրյալների ուղղակի իմացությունից: «Հանճարը ժողովրդի ծնունդն է, - ասում է Ռեմիդյանը, - և ժողովուրդների մեծագույն ստեղծագործությունները բացի ազգային լինելուց, նաև համամարդկային են: Այսպես նա իր մեջ կրում է ժամանակի ամբողջ հոգևոր հարստությունը՝ բանաստեղծը, մտածողը, գիտունը, մանկավարժը, բոլոր այն ձգտումները, որով տոգորված է նրա հանրագիտարանային «Հնգամատյանը»: Ռեմիդյանը խորապես համոզված էր, որ այդ հոգևոր հարստությունը պատկանում է պարսիկ ժողովրդին և որևէ առնչություն չէր կարող ունենալ աղբյուրաբանական կոչված անդամ զանգվածի հետ, զանգված, որ դուրս էր պատմությունից, պետական, քաղաքական, ուստի և մշակութային հաստատություններից: Ռեմիդյանը Նիզամուն անվանում է մեծ հումանիստ, որ հանճարի հատկանիշով ձայնակցում է համամարդկային մշակույթի բարձր գաղափարներին: Նրա գրականությունը իր արմատներով կապված է ֆուլկլորային ավանդազրույցների և գրավոր խրոնիկայի հետ և իր ստեղծագործությամբ արտահայտեց «նոր հայացքներ ու տենդենցներ» ու իբրև նորարար՝ առաջ անցավ իր ժամանակից: Նրա դիդակտիկական և փիլիսոփայությունը ուսանելի են նաև այսօր:

Ռուս գրականության մասին Ռեմիդյանի գրառումների հիման վրա կարելի է մի ամբողջ ուսումնասիրություն գրել գրականության պատմության ու տեսության հարցերի ամենալայն շրջանառությամբ: Հետաքրքրությունը ռուս գրականության նկատմամբ ծագել է գրական իր հակումների

կազմավորման ամենավաղ շրջանից, երբ պատանեկան իր զգացողություններին անդրադարձումները Պուշկինի, Լերմոնտովի, Գոգոլի ստեղծագործություններին ուղղություն էին տալիս իր գրական հակումների ձևավորմանը: Եվ այդ կապը ոռու գրականության հետ Դեմիժյանը կրեց իր ամբողջ կյանքում:

Ռուս գրականության դասականներից Դեմիժյանի համար ամենից ավելի գրավիչը Ալեքսանդր Պուշկինն էր: Առաջին անգիրադարձը 1927 թվականին էր՝ բանաստեղծի ծննդյան 90-ամյակի առթիվ: Պուշկինի կյանքի և ստեղծագործության հետազոտությունը, Դեմիժյանի կարծիքով, չափազանց անհրաժեշտ է ժամանակի ոռու գրականության և հասարակական միջավայրի ճանաչման տեսակետից: Առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում Պուշկին-Կովկաս փոխադարձ հուսաբերությունը: Պուշկինը մշտապես ուղեկից է եղել 19-րդ դարի հայ գրականության դասականների համար: Դեմիժյանը գրում է. «Տողերիս գրողը չի հիշում որևէ գրական գրույց ոռու գրականության մասին հանգուցյալ Հովհաննես Թումանյանի հետ, որ ժամանակին Պուշկինի անունն առանձին ակնածանքով և սիրով չարտասանվեր վերջինիս կողմից» (13, 34):

Շեշտելով Պուշկինի ազդեցությունը հայ նոր բանաստեղծության արվեստի կազմավորման գործում՝ Դեմիժյանը մեծ նշանակություն է տալիս Պուշկինի ստեղծագործության ճանաչմանը հայ իրականության մեջ և անհրաժեշտ է համարում նրա երկերի թարգմանությունը հայերեն: «Պուշկինը և հայ կուլտուրան» հոդվածում Դեմիժյանը ընդլայնում է հանճարեղ բանաստեղծի դերը հայ մտավոր մշակույթի, արվեստի և գրականության ինքնակայացման գործում: Պուշկինը օգնել է հայ մշակույթի գորշիչներին ճանաչելու սեփական – ազգայինը: «Պուշկինը մեծություն է ոչ միայն ոռու ժողովրդի, այլև բոլոր ժողովուրդների համար», բնորոշում է Դեմիժյանը և նշում նրա համաշխարհային նշանակությունը: «Պուշկինը միայն ինքը չստեղծվեց, այլև ստեղծեց ուրիշներին: Ռուսական գրականության վիթխարի հսկաները անշուշտ վերջ ի վերջո ինքնուրույն մեծություններ եղան, բայց նրանց ուղեցույց լույսը, ոմանց և մկրտողը անկասկածելիորեն Պուշկինն էր: Նա մեկեն որոշեց ոռու գրականության կլիման ու եղանակը»:

Դեմիժյանը նշանակալից է համարում, որ հայ մտավորականներին հասու եղավ Պուշկին երևույթին 19-րդ դարի 30-ական թվականներին, անվանի հայագետ Մկրտիչ Էմինի զրաբար թարգմանությամբ: Գրավիչը ոչ միայն պուշկինյան արվեստի կատարելությունն էր, այլև նրա քաղաքացիական ազատասիրական: Այսպես նրան ընկալեց Միքայել Նալբանդյանը, որից «սկսած հայ գրականության մի ամբողջ պլեադա կապված է եղել

Պուշկինի հետ : Պուշկին - բանաստեղծը և Պուշկին - քաղաքացին ունեցել է իր հզոր ազդեցությունը հայ գրական քաղաքական մտքի վրա: Պուշկինյան ռեալիզմով և ժողովրդայնությունը հայ գրականությունն արգասավորեցին Ղ. Աղայանը, Հ. Հովհաննիսյանը, Հ. Թումանյանը, Ավ. Իսահակյանը և այդ ավանդույթը շարունակվեց հետագա տարիներին:

Պուշկինից հետո Գոգոլն է արժանացել Դեմիրճյանի բարձր գնահատանքին: «Ն. Վ. Գոգոլ» հոդվածում Դեմիրճյանը ներկայացնում է գրողի կյանքի ու ստեղծագործության ուղին, բնութագրում նրա երկերի քննադատական ոգին՝ ուղղված ցարական Ռուսաստանի ճորտատիրական բռնության և «գայլային օրենքների վրա հիմնված կարգերի դեմ»: Դեմիրճյանը հոգովածի բնաբան է ընտրել Չերնիշևսկու խոսքերը. «Դու եղել ես Ռուսաստանի ամենաազնիվ զավակներից մեկը, և անսահման-են քո ծառայությունները հայրենիքի հանդեպ»: Քննադատության ենթարկելով ռուսական իրականության հասարակական չարիքները՝ Գոգոլի երկերը միաժամանակ «ստեղծված են վառ հավատով ռուս ժողովրդի հոգեկան հզորության նկատմամբ», քնքուշ սիրով «ռուսական տափաստանների, ռուսաց լեզվի գեղեցկության և ուժի մասին, Ռուսաստանի մեծ ապագայի մասին» (13, 68):

Գոգոլի մահվան 100-ամյակի օրերին Դեմիրճյանը հանդես է եկել մի շարք հոդվածներով, որոնցից ամենաընդարձակը կրում է «Նիկոլայ Վասիլևիչ Գոգոլ» վերնագիրը: Ուրվագծելով գրողի կյանքի ուղին՝ Դեմիրճյանը հիշատակում է գրողի գրեթե բոլոր նշանավոր երկերը՝ «Երեկոները Դիկանկայի մոտ ագարակում» պատմվածքներից մինչև «Մեռած հոգիները»: Առաջին շրջանի գործերից նշանակալից է «Տարաս Բուլբա» վիպակը, որը նվիրված է ուկրաինական ժողովրդի ազատության համար պայքարին: Գոգոլի հաճառը առավել ցայտուն դրսևորվեց «Ռեիզոր» կոմեդիայի և «Մեռած հոգիներ» վեպի հայտնությամբ: Դեմիրճյանը սյուժեների վերլուծությամբ ներկայացնում է պարադոքսների վրա կառուցված երկերում Ռուսաստանի կայսրության մեջ տիրող բյուրոկրատական կարգերի ամբողջ այլանդակությունը: «Գոգոլի մեծագույն արժանիքը եղավ այն, որ նա իր երկու խոշոր ժամանակակիցների Պուշկինի և Լերմոնտովի հետ, առաջնորդ ունենալով նշանավոր քննադատ, մարտնչող Բելինսկուն, գծեց ռուսական գրականության զարգացման ուղին, հիմք դրեց նրա ռեալիզմին և ժողովրդայնությանը»: Գոգոլի գրականությանը, այսպիսով, դպրոց եղավ հետագա սերնդի գրողների Գերցենի, Տուրգենևի, Գոնչարովի, Օստրովսկու, Տոլստոյի, Մալտիկով-Շչեդրինի, Նեկրասովի, Օգարյովի և այլ գրողների համար (14, 519):

Դեմիրճյանը նշում է, որ դեռևս 19-րդ դարի 80-ական թվականներին Գոգոլի երկերը թարգմանվել են հայերեն և լայն ճանաչում գտել հայ

գրական շրջաններում: Նշանակալից փաստ է «Մեռած հոգիների» ամբողջական թարգմանությունը Դեմիրճյանի կողմից, որը լույս տեսավ 1949 թվականին:

Գոգոլի մասին Դեմիրճյանի մյուս հոդվածը կոչվում է «Հանճարեղ սատիրիկը», որն սկսվում է այսպես. «Պուշկին, Լերմոնտով, Գոգոլ-ահա այս երեք շողշողուն համաստեղությունը լուսավորեց 19-րդ դարի սկզբի ռուս գրականության երկնակամարը և նրա արձակած լույսի տակ բացահայտվեց նիկոլայանյան Ռուսաստանի չարաշուք պատկերը» (13, 163): Դեմիրճյանը արժեքավորում է Գոգոլի ստեղծագործությունը որպես «դաժան դարի» ռուսիկանական բյուրոկրատիայի, ռեակցիոն-կալվաձատիրական կարգերի և մոլեգնող գրաքննության դեմ պայքարի արտահայտություն: Դրանով պետք է բացատրել ռուս առաջավոր մտավորականության հիացմունքը Գոգոլի ստեղծագործության և հատկապես «Մեռած հոգիների» նկատմամբ: Վեպի (պոեմի) լույս տեսնելը մեծ խանդավառությամբ ընդունեցին Գերցենը, Պուշկինը, իսկ Բելինսկին Գոգոլին անվանեց «ռուս ազգային բանաստեղծ»: Բարձր գնահատելով Գոգոլի երկերը՝ Դեմիրճյանը առանձնացնում է «Շինել» պատմվածքը, որտեղ պատկերված է մարդու ոչնչացումը դատարկ իրականության մղձավանջում: Հայտնի են Տոլստոյի խոսքերը, թե բոլորս դուրս ենք եկել Գոգոլի «Շինելից»:

Դեմիրճյանը ընդարձակ հոդված է նվիրել «Մեռած հոգիների» լեզվի և ոճի քննությանը: Վեպը (պոեմը) համարելով Գոգոլի «ողջ լեզվառական կուլտուրայի սինթեզը»՝ Դեմիրճյանը, վկայակոչելով «ոճը ինքը մարդն է» հայտնի արտահայտությունը, խնդրի լուսաբանման տեսակետից անհրաժեշտ է համարում «ակնարկ գցել» գրողի կենսագրություն, ապրած միջավայրի և հոգեբանության վրա:

Դեմիրճյանը գտնում է, որ գրողի ոճի ձևավորման համար իրական նախապայման է էպոխան, հասարակական կյանքը իր գաղափարներով, կենցաղով ու հասկացություններով: Սա պայմանավորում է ոչ միայն գրողի բառապաշարը, այլև իրականության ընկալման բազմազանությունը: «Իրականության ճանաչումը,- գրում է Դեմիրճյանը,- Գոգոլի մեջ հետևանքը եղավ այն շփման, որ նա ունեցավ թե ազնվական դասակարգի և թե ժողովրդի հետ մանկության և պատանեկության օրերում» (13, 246): Այս հարաբերության մեջ Գոգոլը նախընտրեց ժողովրդին, գնաց դեպի ժողովուրդը, և ռեալիզմը, Բարձրացավ այդ հիմքի վրա, բայց նա հետևողական չեղավ, թեքվեց «դեպի սլավոբանաֆիլությունը», որի համար Բելինսկին գրեց իր «մեղադրական թուղթը»:

Դեմիրճյանը բացահայտում է ոճական այն տարբերությունը, որ նկատելի է Գոգոլի առաջին շրջանի և, այսպես ասած, պետերբուրգյան

շրջանի միջև: Առաջին շրջանի երկերում ժողովրդի «թոնոգրաֆիական» պատկերն է և գրողի հայացքը զվարթ է և ժպտացող: Երկրորդ շրջանում գրողի հայացքը իրականության հանդեպ սատիրական է և երգիծանքի կիզակետում հայտնվում է վերնախավը:

Դեմիքայանը գրողի ոճին բնորոշ է համարում հեղինակային միջամտությունը դեպքերի նկարագրության մեջ, քնարական գեղումների հետ նաև քննադատական զգաստ ռեալիզմը: Ռճական այդ առանձնահատկությունը Դեմիքայանն անվանում է «եզակի, աննախընթաց բանահյուսական ժանր՝ սատիրական լիրիկա, սատիրայի պոեզիա»: Լիրիկական գեղումների և «այլ պրիոմներով, այլ դրույթներով, այլ իդեոլոգիայով մոտենում է մեր սոցիալիստական ռեալիզմին»: Սա ընդհանուր դրույթ է Դեմիքայանի գրական հայացքներով, որով հիմնավորում է նոր գրականության անասելի կապը դասական գրականության գեղարվեստական ավանդներին:

Ռուս գրականության մեջ զոգոյան սատիրայի շարունակությունը ամենից ավելի ցայտուն արտահայտվեց Սալտիկով-Շչեդրինի ստեղծագործություններում: «Մեծ սատիրիկը» հռոգվածում Դեմիքայանը նրան դասում է Մերվանտսի, Սվիֆտի, Գոգոլի՝ համաշխարհային սատիրիկների շարքում: Շեշտելով նրա ստեղծագործության հեղափոխական բովանդակությունը՝ Դեմիքայանը բնական է համարում դարաշրջանի խոշորագույն մտածողների՝ Մարքսի, Էնգելսի և հատկապես Լենինի հետաքրքրությունը Շչեդրինի նկատմամբ: «Շչեդրինը էպոխայի գրողն էր, նրա ռեալիզմը դուրս է գալիս իր ժամանակի շրջանակներից, դա նախագուշակող, նախատեսող ռեալիզմ էր», - բնութագրում է Դեմիքայանը և այս հատկանիշով նրան մերձեցնում սոցիալիստական ռեալիզմին: «Մի քաղաքի պատմությունը» երգիծական վեպի այլաբանության մեջ Շչեդրինը համարձակորեն ցույց տվեց բռնակալական Ռուսաստանի ներքին հակասությունները և իբրև մտածող՝ դարձավ ժամանակի «փիլիսոփան և մեծ ապագան գուշակող մարգարեն»: